

Հայկական ատոմային էլեկտրակայան ՓԲԸ ղեկավարության հայտարարագիրը շահագործման լրացուցիչ ժամկետի ընթացքում անվտանգության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

Շահագործման նախագծային ժամկետից դուրս Հայկական ԱԷԿ-ի շահագործման շարունակումը «ՀԱԷԿ» ՓԲԸ ղեկավարությունը համարում է բարձր առաջնահերթության գործունեություն: Հետևաբար, առաջնահերթ խնդիր է հանդիսանում գործող №2 էներգաբլոկի շահագործման անվտանգության հիմնավորումը, ինչի համար, ելնելով անվտանգության գնահատականի արդյունքներից, մանրամասն կսահմանվեն փաստաթղթերի մշակման և անվտանգությանը վերաբերող բոլոր հայտնաբերված խնդիրները վերացնելուն ուղղված լրացուցիչ աշխատանքների ծավալները: Նման մոտեցումը ոչ միայն թույլ կտա պահպանելու ԱԷԿ-ի հզորությունները, այլև բարձրացնելու նրա անվտանգության մակարդակը և բարելավելու էներգաբլոկի աշխատանքային բնութագիրը:

Շահագործման լրացուցիչ ժամկետի (ՇԼԺ) ընթացքում հիմնական նպատակ է հանդիսանում ատոմային էներգիայի կիրառման բնագավառում գործող նորմերի և կանոնների պահանջներին և չափորոշիչներին համապատասխան գործող էներգաբլոկի անվտանգ և կայուն աշխատանքի ապահովումը:

«ՀԱԷԿ» ՓԲԸ վարչական և տեխնիկական ղեկավարությունը քաջ գիտակցում է, որ լիարժեք և պաշտոնական պատասխանատվություն է կրում ՇԼԺ-ի ընթացքում շահագործվող էներգաբլոկի անվտանգության համար, ինչը ապահովվում է՝

- ատոմային էներգիայի կիրառման ժամանակ աշխատանքները կարգավորելու նպատակով գործածվող նորմատիվային իրավական ակտերի և նորմատիվային փաստաթղթերի, ՀԱԷԿ-ի էներգաբլոկերի անվտանգ շահագործման ապահովումը կանոնակարգող տեխնիկական փաստաթղթերի պահանջների խիստ պահպանմամբ;
- էներգաբլոկի՝ տեխնիկական փաստաթղթերի պահանջներին խիստ համապատասխան շահագործմամբ;
- էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման որակի ապահովման ծրագրի մշակմամբ և իրականացմամբ;
- էներգաբլոկի սարքավորումների և կառուցվածքների համալիր հետազոտության որակի ապահովման ծրագրի պահանջների կատարմամբ;
- էներգաբլոկը ՇԼԺ ընթացքում շահագործելուն նախապատրաստելու ծրագրի մշակմամբ և իրագործմամբ;
- սարքավորումների յուրաժամանակ արդիականացման և վերականգնման իրականացմամբ, նոր տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրմամբ, շահագործման ընթացակարգերի կատարելագործմամբ՝ հաշվի առնելով շահագործման փորձը, համալիր հետազոտության և հնացման կառավարման արդյունքները, ինչպես նաև բնագավառի լավագույն միջազգային փորձը;
- կայանի անվտանգության վերլուծությունների իրականացմամբ և անվտանգության գնահատականի վերաբերյալ հաշվետվությունների պարբերական թողարկմամբ՝ հաստատելու համար այն, որ անվտանգության բոլոր խնդիրները գտել են իրենց լուծումը կամ լուծված կլինեն սահմանված ժամկետներում;

- ՀԱԷԿ-ի և կապալային կազմակերպությունների աշխատակիցների կողմից աշխատանքների իրականացման սահմանված կարգը պահպանելու ստուգման և վերահսկողության իրականացմամբ;
- կատարվող աշխատանքին աշխատակիցների որակավորման համապատասխանության ապահովմամբ;
- ՀԱԷԿ-ի բոլոր աշխատակիցների մոտ անվտանգության մշակույթի բարձր մակարդակի ձևավորմամբ:
Անվտանգության անհրաժեշտ մակարդակին հասնելու համար «ՀԱԷԿ» ՓԲԸ ղեկավարությունը ստանձնում է հետևյալ պարտավորությունները.
- Իրականացնել անհրաժեշտ ֆինանսական, նյութատեխնիկական և մարդկային ռեսուրսների հատկացում ` անվտանգության ապահովման բնագավառում նպատակների իրականացման համար;
- ՀԱԷԿ մատակարարվող սարքավորումների և իրականացվող աշխատանքների որակի վերահսկման իրականացման նպատակով ներգրավել մասնագիտացված կազմակերպություններ;
- բոլոր աշխատակիցների կողմից իրենց պաշտոնական պարտականությունների իրականացման համար ապահովել անվտանգ աշխատանքային պայմաններ;
- երաշխավորել, որ կայանի աշխատակիցների ցանկացած նախաձեռնություն, որն առնչվում է անվտանգության ապահովմանն ու ուժեղացմանը, կստանա աջակցություն և կգնահատվի ըստ արժանվույն ;
- հասարակական, պետական և միջազգային կազմակերպություններին տրամադրել անվտանգության վերաբերյալ տեղեկատվություն և նրանց հետ համագործակցել` անվտանգության մակարդակի բարձրացման նպատակով;
- իրազեկել ՀԱԷԿ-ի բոլոր աշխատակիցներին ՇԼԺ ընթացքում անվտանգության ապահովման բնագավառում իրականացվող քաղաքականության մասին:
Հայաստանի Հանրապետությունում և Հայկական ԱԷԿ-ում անվտանգությունն ամենաբարձր արժեքն է համարվում: Դա ամրագրված է ինչպես ՀՀ օրենսդրության մեջ, այնպես էլ ճյուղային նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերում և կայանի ընթացակարգերում:
Կայանի ղեկավարությունը մշտապես մեծ ուշադրություն է դարձնում անվտանգության ապահովման հարցերին, զգալի ջանքեր է գործադրում` անվտանգությունը պատշաճ մակարդակի վրա պահելու համար:
Անվտանգության և հուսալիության կառավարումը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ում չի դիտարկվում մեկուսացված կերպով, այլ` որպես ամբողջությամբ վերցրած կառավարման համակարգի բաղադրիչ մաս. այսինքն` անվտանգության և հուսալիության կառավարման համակարգը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կառավարման համակարգի անբաժանելի մասն է հանդիսանում:
«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի անվտանգության և հուսալիության կառավարման համակարգի առջև դրվում է երկու հիմնական նպատակների իրագործման պահանջ.
- անվտանգության շահագործական ցուցանիշների բարելավում ՀԱԷԿ-ի շահագործման բոլոր ռեժիմներում անվտանգության վրա ազդող գործունեությունը պլանավորելու, վերահսկելու և նրա վրա հսկողություն իրականացնելու միջոցով,
- անվտանգության բարձր կուլտուրայի ստեղծում և պահպանում ՀԱԷԿ-ի անվտանգության և հուսալիության վրա ազդող աշխատանքների կատարման

ընթացքում պաշտոնատար անձանց ինքնագիտակցությունը, պատասխանատվությունը և ինքնավերահսկումը զարգացնելու և ամրապնդելու միջոցով:

ՀԱԷԿ-ի անվտանգությունն ապահովվում է խոր էշելոնային պաշտպանության սկզբունքի իրագործմամբ, որը հիմնված է շրջակա միջավայր ճառագայթասկտիվ արգասիքների հնարավոր արտանետման ուղու վրա գտնվող արգելքների և համակարգերի, ինչպես նաև արգելքների պաշտպանման և նրանց արդյունավետության պահպանման տեխնիկական և կազմակերպչական միջոցների համակարգի կիրառման վրա: